հուլիս, 2025

# Երաժշտության թեստ

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 70:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասն ընդգրկում է տասը առաջադրանք:

Առաջադրանքներ № 1-6:

Հրահանգ: Առաջին վեց առաջադրանքից յուրաքանչյուրը բաղկացած է մեկ երաժշտական հատվածից և երկու հարցից: Յուրաքանչյուր հարցին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ընտրեք պատասխանը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը: Ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, համապատասխանաբար, յուրաքանչյուր առաջադրանք՝ երկու միավոր:

Առաջադրանքի համար նախատեսված երաժշտական հատվածը լսում եք երկու անգամ: Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև դադարը կազմում է 20 վայրկյան: Նախքան երաժշտական հատվածի ունկնդրելը տրվում է 10 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը կարդալու համար:

*Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:*

(2) **Առաջադրանք № 1.**

**Նախքան առաջին երաժշտական հատվածն  ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**1.1 Վրաստանի ո՞ր  շրջանի  երգն է:**

ա) Գուրիայի,

բ) Սամեգրելոյի,

գ) Փշավիի,

դ) Կախեթիի:

**1.2 Ո՞ր ժանրին է պատկանում երգը:**

ա) Պարային,

բ) հարսանեկան,

գ) աշխատանքային,

դ) օրացուցային:

(2) **Առաջադրանք № 2.**

**Նախքան երկրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**2.1 Ո՞ր կինոնկարի սաունդթրեքի հատվածն է հնչում:**

ა) «Նինո» („ნინო“),

ბ) «Ինչ երիտասարդություն է» („ღიმილის ბიჭები“),

გ) «Վերջինը Սաբուդարայից» („საბუდარელი ჭაბუკი“),

დ) «Երբ ծաղկեց նշենին» („როცა აყვავდა ნუში“):

**2.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ა) Բիձինա Կվերնաձե,

ბ) Ռևազ Լաղիձե,

გ) Գիա Կղանչելի,

დ) Նոդար Գաբունիա:

(2) **Առաջադրանք № 3.**

**Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**3.1 Ո՞վ է կոմպոզիտորը:**

ա) Արամ Խաչատրյանը,

բ) Իգոր Ստրավինսկին,

գ) Օթար Թաքթաքիշվիլին,

դ) Սերգեյ Պրոկոֆևը:

**3.2 Ո՞ր բալետից է հնչում հատվածը:**

ա) «Ռոմեո և Ջուլիետ»-ից,

բ) «Սպարտակ»-ից,

գ) «Գորդա»-ից,

դ) «Հրեղեն հավք»-ից:

(2) **Առաջադրանք № 4.**

**Նախքան չորրորդ երաժշտական հատվածն  ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**4.1 Ո՞ր օպերային ձայնն է կատարում հատվածը:**

ա) Սոպրանոն,

բ) կոնտրալտոն,

գ) կոլորատուրային սոպրանոն,

դ) մեցցո-սոպրանոն:

**4.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ա) Ռիխարդ Վագները,

բ) Գեորգ Ֆրիդրիխ Հենդելը,

գ) Քրիստոֆ Գլյուկը,

դ) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը:

(2) **Առաջադրանք № 5.**

**Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**5.1 Ո՞ր գործիքային կազմն է կատարում հատվածը:**

ա) լարային-աղեղնավոր երաժշտական գործիքների նվագախումբը,

բ) կամերային-գործիքային անսամբլը,

գ) սիմֆոնիկ նվագախումբը,

դ) փողային երաժշտական գործիքների նվագախումբը:

**5.2 Ո՞ր դարաշրջանին/հոսանքին է պատկանում ստեղծագործությունը:**

ա) Կլասիցիզմին,

բ) իմպրեսիոնիզմին,

գ) բարոկկոյին,

դ) ռոմանտիզմին:

(2) **Առաջադրանք № 6.**

**Նախքան վեցերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**6.1 Ո՞ր երգիչն է կատարում երգը:**

ա) Էլլա Ֆիցջերալդը,

բ) Բիլի Այլիշը,

գ) Ջենիս Ջոպլինը,

դ) Էդիթ Պիաֆը:

**6.2 Ո՞ր ժանրին է պատկանում երգը:**

ա) Ռոքին,

բ) շանսոնին,

գ) բլյուզին,

դ) ֆոլկին:

(1) Առաջադրանք № 7.

<u>Հրահանգ: </u>Ունկնդրեք երաժշտական հնչյունների շարքը: Նոտային գրառման մեջ տրված լադի չորս տարբերակից ընտրեք ունկնդրած լադի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը:

Հնչյունների շարքը լսեք երկու անգամ:

Նախքան  ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



(1) Առաջադրանք № 8.

<u>Հրահանգ:</u> Լսեք երաժշտական արտահայտությունը (ֆրազ): Նոտային գրառման մեջ տրված չորս տարբերվող ռիթմիկ ֆիգուրացիաներից ընտրեք ունկնդրած համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը:

Երաժշտական արտահայտությունը (ֆրազ) լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:

ա) 

բ) 

գ) 

դ) 

(5) Առաջադրանք № 9.

*Երաժշտական թելադրություն:*

<u>Հրահանգ:</u> Ունկնդրեք մեղեդին և գրառեք նոտային համակարգում: Մեղեդին միաձայնային է, ութ տակտանոց և տրված է մեկ տոնայնության մեջ: Այն լսելու և գրառելու համար տրվում է 15 րոպե: Մեղեդին լսում եք ձայնագրությամբ հինգ անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե:

Թելադրությունը տրված է <u>*Ֆա մաժոր (F dur)*</u> տոնայնության մեջ:

<u>*Ձեր կողմից գրառված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգ, գրչով:*</u>

(13) Առաջադրանք № 10.

*Երաժշտական ստեղծագործության վերլուծություն*

<u>Հրահանգ:</u> Վերլուծեք երաժշտական ստեղծագործության հատվածը՝ աուդիո ձայնագրության և նոտային գրառման հիման վրա: Երաժշտական ստեղծագործության հատվածը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը վերանայելու համար:

*Հարցերը դիտեք հաջորդ երկու էջի վրա:*

(2) **1. Ո՞ր ժանրին է պատկանում ձեր ունկնդրած ստեղծագործության հատվածը: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:**

(3) **2. Որոշեք՝**

ա) հատվածի սկզբնական տոնայնությունը,

բ) 1-14-րդ տակտերում տրված հատվածի երաժշտական ձևը,

գ) 10-14-րդ տակտերում տրված կադանսում պարունակվող ակորդների հարմոնիկ (ներդաշնակ) ֆունկցիաները:

(3) **3. Բնութագրեք տրված հատվածը գեղարվեստա-հուզական տեսանկյունից: Վերլուծեք և նկարագրեք երաժշտության արտահայտչամիջոցները, որոնք հատկապես կարևոր են դրա երաժշտագեղարվեստական բովանդակությունը ստեղծելու համար (ինչ տեսակի մեղեդի, ռիթմ, տեմպ, ռեգիստր, տեմբր, ներդաշնակություն (հարմոնիա), լադատոնայնություն, ֆակտուրա և այլ է կիրառված ունկնդրած հատվածում):**

(2) **4. Ունկնդրած ստեղծագործության հատվածի երաժշտական բնութագրիչների հիման վրա, որոշեք կոմպոզիտորի ինքնությունը և այն դարաշրջանը, որին նա պատկանում է:**

(3) **5. Բնութագրեք կոմպոզիտորի ստեղծագործականությունը և նշեք, թե ինչ նորարարություն է նա ներմուծել երաժշտության ոլորտում: Դիտարկեք ստեղծագործությունը, որին պատկանում է ունկնդրած հատվածը և դատողություն արեք նրա պատմամշակութային համատեքստի շուրջ: Համառոտ քննարկեք այն ժանրի զարգացման պատմությունը, որին պատկանում է ունկնդրած ստեղծագործությունը:**

*Երաժշտական հատվածի նոտային գրառումը դիտեք հաջորդ էջերում:*


Molto moderato (♩= 80)
17
2nd Piano
(Orchestra)
mf (Clar.)
3
3


10
1
Più mosso
poco rit.
10
2
p a tempo


(Solo)
Moderato assai
20
ten.
Più mosso
3
mf tranquillo
ten.
ff
2nd Piano
3
f
4
(Solo)
Scherzando (commodo)
mp poco scherzando
legato
4


pochissimo rall.
A 30
a tempo
ten.
R.H.
p
ten.
ten.


f martellato
ff
pp
17
poco rall.


40
mf
Più mosso
5
(Solo)
(L.H.)
8va
poco rit.
5
(2nd Piano)
mf
poco rit.


3
3



8va
(L.H)
R.H.
poco rit.


tranquillo
50
p
p
(Solo)
3
3
f deciso
p scherzando



Poco agitato
R.H.
p poco cresc.
mf
3
cresc.


60
f
3
B


ff molto marcato
70


6
6
Tempo giusto
(2nd Piano)
ff
non troppo f
ff


80
7
8va
pp legato
cresc.
f
7
p


8
sff
8
f
8va
90
sff


9
8va
p
9
marc.
mf
3


8va
simile
8va
10
10


100
8va
8va
11
p
p cresc.
11


f
sfz
110
p cresc.


rall. e dim.
sfz
rall. e dim.
a tempo
12
Tempo giusto
f
12
ff


120
3
3
3
3
mf


p
p
p
p
130
13
Meno
13
p


(2nd Piano)
p rit.
ff a tempo
sfz

II մաս

Առաջադրանքներ № 11-28.

Հրահանգ: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրեք պատասխանը և դրեք X նշանը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում: Ոչ մի ուրիշ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չեն ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշված պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է՝ 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 11.**

**Ո՞ր բնութագրումը *<u>չի համապատասխանում</u>* Վերածննդի դարաշրջանին բնորոշ մեսսայի ժանրին:**

ա) Կանանց և տղամարդկանց ձայների խառը երգչախումբ a cappella,

բ) խիստ ոճի պոլիֆոնիա,

գ) տղամարդկանց երգչախմբի մոնոդիկ երգասացություն,

դ) կանոնական աղոթքների վրա հիմնված երգասացություն:

(1) **Առաջադրանք № 12.**

**Ո՞ր ստեղծագործությունն է պատկանում ծրագրային երաժշտության ժանրին:**

ա) Ֆրանց Շուբերտի «Չքնաղ ջրաղացպանը» վոկալային շարքը,

բ) Ֆելիքս Մենդելսոնի «Ամառային գիշերվա երազը» սիմֆոնիկ նախերգանքը,

գ) Գեորգ Ֆրիդրիխ Հենդելի «Սամսոն» օրատորիան,

դ) Յոզեֆ Հայդնի «Լիտավրների տրեմոլոյով» սիմֆոնիան:

(1) **Առաջադրանք № 13.**

**Ի՞նչ ընդհանուր երաժշտական բնութագրիչներ ունեն Էդվարդ Գրիգի «Լեռնային թագավորի քարայրում» և Մորիս Ռավելի «Բոլերո» նվագախմբային պիեսները:**

ա) Երկուսն էլ պատկանում են միևնույն երաժշտական ուղղությանը,

բ) երկու պիեսներին էլ բնորոշ են մոնոտոն դինամիկան և ռիթմիկ օստինատոն,

գ) նվագախմբային պիեսները ծրագրային սիմֆոնիզմի օրինակներ են,

դ) պիեսներում երաժշտական զարգացման սկզբունքներից մեկը տեմբրային վարիացիան է:

(1) **Առաջադրանք № 14.**

**Ո՞ր բնութագրումը *<u>չի համապատասխանում</u>* Ջուզեպպե Վերդիի «Աիդա» օպերային:**

ա) Օպերայում չընդհատվող զարգացման սկզբունքով կառուցված տեսարանների հետ մեկտեղ պահպանվում է նաև համարային կառուցվածքը,

բ) նախերգանքը փոխանցում է օպերայի հիմնական գաղափարը և երաժշտական թեմաներով կապված է օպերայի հետ,

գ) Գրանդ օպերայի ժանրը՝ իր տեսարանային կողմի առավելությամբ և երգչախմբային տեսարանների առատությամբ բացառել է գործող անձանց անհատական բնութագրումը,

դ) օպերայում առաջատարն է վոկալային գիծը, սակայն նվագախմբային պարտիան մեծ դեր է խաղում գեղարվեստական կերպարների զարգացման գործում:

(1) **Առաջադրանք № 15.**

**Ո՞ր ստեղծագործական նորարարությունը *կապված չէ* Էկտոր Բեռլիոզի անվան հետ:**

ա) Լայտմոտիվային բնութագրության ներդրումը սիմֆոնիկ ժանրում,

բ) ֆրանսիական սյուժետային ծրագրային սիմֆոնիզմի հիմնադրումը,

գ) քառամաս սիմֆոնիկ ցիկլի ընդլայնումը հինգ մասի,

դ) սիմֆոնիկ նվագախմբում լարային գործիքի՝ տավիղի (արֆա) ավելացումը:

(1) **Առաջադրանք № 16.**

**Ո՞ր կոմպոզիտորն է ստեղծել օպերային տետրալոգիան:**

ա) Ջակոմո Պուչինին,

բ) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը,

գ) Ռիխարդ Վագները,

դ) Օլիվյե Մեսիանը:

(1) **Առաջադրանք № 17.**

**Հետևյալ երաժշտական տերմիններից որը *չի նշանակում* տեմպ:**

ა) Presto,

ბ) Lento,

გ) Pesante,

დ) Moderato:

(1) **Առաջադրանք № 18.**

**Կոմպոզիտորները օպերային ժանրի բարիտոնի և բասի պարտիաներում հաճախ օգտագործում են այսպես կոչված «շուտասելուկներ»: Ինչպիսի՞ հուզական ասպեկտի են նրանք ցանկանում հասնել դրանով:**

ա) Էպիկական հանգստության,

բ) դրամատիկական խորության,

գ) անկեղծ քնարականության,

դ) կատակերգական թեթևության:

(1) **Առաջադրանք № 19.**

**Ո՞ր հեղինակի գրական տեքստն է հիմք հանդիսացել Նոդար Գաբունիայի «Իգավի» («Առակ») վոկալ-գործիքային անսամբլի համար:**

ա) Շոթա Ռուսթավելիի,

բ) Սուլխան-Սաբա Օրբելիանիի,

գ) Դավիթ Գուրամիշվիլիի,

դ) Ակակի Ծերեթելիի:

(1) **Առաջադրանք № 20.**

**Երաժշտության մեջ ո՞ր թվականներն է ընդգրկում բարոկկոյի ժամանակաշրջանը:**

ა) 1750-1820,

ბ) 1450-1600,

გ) 1820-1900,

დ) 1600-1750:

(1) **Առաջադրանք № 21.**

**Ինչպե՞ս է կոչվում մենակատարների անսամբլը կոնչերտո գրոսսո (concerto grosso) ժանրի ստեղծագործությունների մեջ:**

ա) Կոնչերտինո (Concertino),

բ) տուտտի (Tutti),

գ) բենդ (Band),

դ) ռիպիենո (Ripieno):

(1) **Առաջադրանք № 22.**

**Ո՞ր հեղինակի գրական ստեղծագործության հիման վրա է ստեղծվել Ջոակինո Ռոսսինիի «Սևիլյան սափրիչը» օպերան:**

ա) Պիեռ Բոմարշեի,

բ) Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթեի,

գ) Ալեքսանդր Դյումայի (որդի),

դ) Կառլո Գոցցիի:

(1) **Առաջադրանք № 23.**

**Հիմնականում ո՞ր երաժշտական ձևով են գրվել կլասիցիզմի ժամանակաշրջանի ցիկլային ձևերի՝ սոնատի, քառյակի, սիմֆոնիայի առաջին մասերը:**

ա) Եռամաս,

բ) ռոնդոյի,

գ) վարիացիոն,

դ) սոնատային:

(1) **Առաջադրանք № 24.**

**Ո՞ր սահմանումը *<u>չի համապատասխանում</u>* Ֆրանց Շուբերտի «Անտառի արքան» բալլադին:**

ա) Դաշնամուրային նվագակցության մեջ օգտագործվում է հնչյունագրության տարր,

բ) վոկալ ինտոնացիան հիմնված է մի քանի գեղարվեստական կերպարի վրա,

գ) բալլադը կառուցված է մեկ երաժշտական թեմայի դինամիկ զարգացման վրա,

դ) դաշնամուրային նվագակցությունը հուզական և արտահայտչական դեր է կատարում:

(1) **Առաջադրանք № 25.**

**Ո՞ր ֆրանսիացի կոմպոզիտորը *<u>չի պատկանում </u>* «Վեցյակ» անունով հայտնի ստեղծագործական խմբին:**

ա) Կլոդ Դեբյուսին,

բ) Ֆրանսիս Պուլենկը,

գ) Դարիուս Միյոն,

դ) Արթուր Հոնեգերը:

(1) **Առաջադրանք № 26.**

**Ո՞ր կոմպոզիցիոն մեթոդն է բնորոշ Առնոլդ Շյոնբերգի երաժշտությանը:**

ա) Սերիական երաժշտություն գրելու տեխնիկան,

բ) ջազային իմպրովիզացիայի տարրերը,

գ) էլեկտրոնային երաժշտության սկզբունքները,

դ) Բարոկկոյի դարաշրջանի ոճավորումը:

(1) **Առաջադրանք № 27.**

**Ո՞ր ռոմանտիկ կոմպոզիտորի ստեղծագործականության հետ են կապված Ֆլորեստանի և Եվսեբիոսի գեղարվեստական կերպարները:**

ա) Ֆրիդերիկ Շոպենի,

բ) Ռոբերտ Շումանի,

գ) Ֆերենց Լիստի,

դ) Էկտոր Բեռլիոզի:

(1) **Առաջադրանք № 28.**

**Վրացական ո՞ր սիմֆոնիկ ստեղծագործությունն է ներառում վոկալ:**

ა) Բիձինա Կվերնաձեի «Պար-ֆանտազիա» սիմֆոնիկ պիեսը,

ბ) Գիա Կղանչելիի №3 սիմֆոնիան,

გ) Շալվա Մշվելիձեի «Զվիադաուրի» սիմֆոնիկ պոեմը,

დ) Սուլխան Նասիձեի «Փիրոսմանի» սիմֆոնիան:

Առաջադրանքներ № 29 - 32.

*Կառուցում նոտայից*

<u>Հրահանգ:</u> Կառուցեք և պատասխանների թերթիկի վրա տրված նոտաների համակարգի վրա գրառեք՝ ինտերվալը, ակորդները և լադը *<u>Մի բեմոլ</u>* նոտայից:

(1) 29. Մաքուր կվարտա:

(1) 30. Մինոր սեքստակորդ:

(1) 31. Փոքր մաժոր սեպտակորդ:

(1) 32. Մեղեդիական մաժոր:

Առաջադրանքներ № 33-35.

*Համապատասխանության որոշում*

<u>Հրահանգ:</u> Առաջադրանքում տրված է թվարկացանկի երկու սյունակ: Որոշեք համապատասխանությունը դրանց միջև: Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (1, 2, 3) համապատասխանում է աջ սյունակի <u>*միայն մեկ*</u> տվյալ (ա, բ, գ, ը, ե): Յուրաքանչյուր ընտրված համապատասխանությունը պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում նշեք X նշանով: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

(3) **Առաջադրանք № 33.**

**Որոշեք համապատասխանությունը երաժշտական ժանրերի  և ստեղծագործությունների միջև.**

| | |
|---|---|
| 1. Կանտատ | ա) «Էգմոնտ» |
| 2. Սիմֆոնիա | բ) «Դիդոնե և Էնեաս» |
| 3. Սյուիտ | գ) «Երաժշտություն ջրի վրա» |
| | դ) «Կարմինա Բուրանա» |
| | ե) «Նոր աշխարհից» |

(3) **Առաջադրանք № 34.**

**Որոշեք համապատասխանությունը վրացական օպերաների և կոմպոզիտորների միջև.**

1. «Դաիսի» („დაისი“)
2. «Նենգ Դարեջանը» („დარეჯან ცბიერი“)
3. «Եվ տարին էր ութերորդ...» („იყო მერვესა წელსა...“)

ა) Զաքարիա Փալիաշվիլի

ბ) Օթար Թաքթաքիշվիլի

გ) Բիձինա Կվերնաձե

დ) Մելիտոն Բալանչիվաձե

ე) Վիկտոր Դոլիձե

(3) **Առաջադրանք № 35.**

**Որոշեք համապատասխանությունը օպերային տեսարանների և օպերաների միջև.**

1. «Տեսարան Էլիզիումում»
2. «Տեսարան Լիլաս Պաստիայի պանդոկում»
3. «Տեսարան Գայլի հովտում»

ա) «Ֆիգարոյի ամուսնությունը»

բ) «Կարմեն»

գ) «Լոհենգրին»

դ) «Ազատ հրաձիգը»

ե) «Օրփեոս և Էվրիդիկե»

Առաջադրանքներ № 36-40.

*«Ճշմարիտ է-Սխալ է»*

Հրահանգ: Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ: Եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում, նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, *հսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:*

Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը կարող եք համապատասխանեցրել ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն: Հաշվի առեք, որ պատասխանը չի ընդունվի, եթե տրված բացատրության դրական ձևը փոխեք բացասականով կամ ընդհակառակը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 36.**

Կանտիլենան երգեցողություն ձև է, որը մոտ է խոսակցական լեզվին:

(1) **Առաջադրանք № 37.**

Երաժշտության մեջ հույզն արտահայտող տերմիններից մեկն է «ֆորշլագը»:

(1) **Առաջադրանք № 38.**

Գուրիական ժողովրդական «Բատոնեբո» երգը պատկանում է խնջույքի ժանրին:

(1) **Առաջադրանք № 39.**

Ֆուգան հոմոֆոնիկ դասավորության ձևերից մեկն է:

(1) **Առաջադրանք № 40.**

Agitato-ն երաժշտության մեջ ազգային նշանակող տերմին է:

Առաջադրանքներ № 41-42.

*Ժամանակագրության որոշում*

<u>Հրահանգ:</u> Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույնը դասավորեք թվարկացանկը: Պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում ժամանակագրական հաջորդականությունը նշված է թվանշաններով՝ 1-ից մինչև 4-ը: Գրեք պատասխանները վանդակում՝ ընտրված թվանշանի երկայնքով, այբուբենի համապատասխան տառերով (ա, բ, գ, դ): Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 41.**

**Ժամանակագրական առումով դասավորեք երաժշտական ուղղությունները.**

ա) Էքսպրեսիոնիզմ,

բ) Բարոկկո,

գ) Ռոմանտիզմ,

դ) Կլասիցիզմ:

(1) **Առաջադրանք № 42.**

**Ժամանակագրական առումով դասավորեք վրացի օպերային երգիչների թվարկացանկը՝ ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի.**

ա) Նադեժդա Ցոմաիա,

բ) Սալոմե Ջիքիա,

գ) Մայա Թոմաձե,

դ) Մեդեա Ամիրանաշվիլի: